ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի իրողութիւն, որը վերին աստիճանի բնաորոշում է անցած 1890 թուականը, այդ շատ ղեկավար անձերի հեռանալն է իրանց բարձր պաշտօններից։ Գերմանական կանցլեր Բիսմարկի հրաժարականը, Ունգարական մինիսար-նախագահ Տիսսայի հրաժարականը, գերմանական պալատական պաստոր և հակա-հրէականութեան շարժման պարագլուխ Ստեոկերի հեռացնելը, Մոլտկէի յաջորդ կոմս Վալդերզէէ՝ի հեռացնելը գերմանական գլխաւոր շտաբի կառավարչութիւնից, իտալական մինիսար նախագահ Կրիսպիի հրաժարականը ներկայ թուականի յունուար ամսին,—ահա հեռացած և շատ կարևոր անձերի այդ շարքը։

Մի ուրիշ իրողութիւն, որը առանց կապի չէ այդ առաջին իրողութեան հետ՝ այդ այն կենդրոնական դիրքն է, որ բռնեց եւրոպական ներքին թէ արտաքին քաղաքականութեան մէջ Գերմանիայի երիտասարդ կայսր Վիլհելմ II-ը։ Բանւոր դասակարդին վերաբերեալ խնդիրները քննելու համար Բերլինում դումարած կոնգրեսը, կազմած Արևմտեան Եւրոպայի պետութիւնների ներկայացուցիչներից, ապա նոյն քաղաքում դումարուած գերմանական դպրոցական կոնֆերենցիան,—ժի-ժի նշանաբաններ էին, որոնցից ազդեց ամբողջ լուսաւոր աշխարհը, և որոնց մէջ երիտասարդ կայսրը նախաձեռնողի և ղեկավարի դեր կատարեց։ Նոյն իսկ Աֆրիկայի բաժանումը եւրոպական տէրութիւնների մէջ, մի անցք, որ ահագին պատմական—քաղաքական և կուլտուրական նշանակութիւն ունի,—սկսեց Գերմանիայի և Անգլիայի մէջ կայացրած առանձին դաշնակցութիւնով, որի օրինակին հետևեցին միւս եւրոպական տէրութիւնները։

Բանւորական խնդրի վերաբերեալ կայացրած կոնգրեսը արա-

գացրեց բանուորներին վերաբերեալ օրէնսդրութիւնը թէ Գերմանիայում և թէ Արևմտեան Եւրոպայի այլ երկիրներում։ Իսկ այդ օրէնսդրութեան գլխաւոր առարկաներն են՝ անչափահաս բանուորներին և կին բանուորներին օրէնքի պաշտպանութեան ներքոյ առնել, չափահասների համար ստեղծել այլ և այլ մշտական գանձարաններ նոցա և ընտանիքները այլ և այլ դժբաղդ պատահարներից ապահովելու համար, ծերութեան ժամանակ պենսիաներ տալու համար և վերջապէս, եթէ կարելի է՝ չը թոյլ տալ որ բանուորները որոշ ժամերից աւելի աշխատեն և որ շաբաթը գոնէ մի օր հանգստութիւն տուի նրանց։ Բացի օրւայ ժամերի խնդրից՝ բոլոր մնացեալ ինդիրները իրանց լուծումը ստանում են այժմ՝ շատ թէ քիչ բաւարար կերպով, ժամանակի ամենաաղաղակող պահանջներին բաւարարութիւն տալու չափով։

Կապակցութեամբ այն երկու իրողութիւնների հետ, որ վերը յիշատակեցինք, պէտք է վկայել և այս երրորդ իրողութիւնը, որ 1890 թուականին Եւրոպայում տիրեց մի այնպիսի խաղաղ տրամադրութիւն, որպիսին չէր եղած շատ տարիներ առաջ։ Ընդհարումներ պետութիւնների իրար մէջ չեղան, պատերազմի մասին ոչ մի անգամ լրջօրէն խօսակցութիւն չեղաւ և ոչ էլ առիթներ տուեցին այդպիսի խօսակցութիւնների։ Այդ հանգամանքը պէտք է վերագրել գլխաւորապէս նրան, որ այն մարմինը, որ քանի տարիներից ի վեր Եւրոպայում ամենամեծ պատերազմական ոյժն է կազմում—եռապետական դաշնակցութիւնը Գերմանիայի ղեկավարութեամբ—հետևեց խաղաղ քաղաքականութեան. իսկ այս վերջինը կապ ունէր այն ձեռնարկութիւնների հետ, որ եղան Գերմանիայում և որոնց յաջողութիւնը կարելի էր ապահովել միմիայն հետևելով խաղաղ արտաքին քաղաքականութեան։ Խաղաղութեան անխախտ պահպանելը մինչև անգամ մի անձնական խնդիր էր Գերմանիայի կայսեր համար, որը առաջին տարին էր կառավարում առանց իշխան Բիսմարկի, այսինքն առանց այն պետական անձի, որի ազդեցութեանն էր վերագրւում վերջին քսան տարիների խաղաղութիւնը պահպանելու յաջողութիւնը։ Բայց չը պէտք է մոռանալ և այս, որ խաղաղութիւնը պահպանելու յաջողութիւնը Գերմանիայի համար դիւրացված է նրանով, որ ամենահզօր դաշնակցութեան ղեկավար ան-

դամ լինելով՝ նա այժմ բոլորովին ապահով է արտաքին յարձակումներից. իսկ այդ դաշնակցութեան ստեղծողը նոյն Բիսմարկն է, որը ստեղծեց և Գերմանիայի միութիւնը։

Բնական է այդ պատճառով, որ նաև իշխան Բիսմարկի հեռանալուց յետ, Վիլհելմ II կայսրը բնաւ չը մտածեց այդ դաշնակցութիւնը լուծել, թէև այդ դաշնակցութիւնը այս վերջին տարին որ և է նոր ոյժ չը ստացաւ։ Այդ դաշնակցութեան ամրութիւնը ապացուցեց նաև նորերումս կատարուած անցքերով Իտալիայում, ուր, չը նայելով որ ցայժմեայ մինիստր-նախագահ Կրիսպին հեռացաւ իւր պաշտօնից, այնու ամենայնիւ նորա յաջորդ դի-Ռուդինի հարկ համարեց արտայայտել, որ Իտալիայի դաշնակցութիւնը Գերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի հետ կը շարունակի հիմք ծառայել Իտալիայի արտաքին քաղաքականութեան։

Կրիսպիի հեռանալը իտալական արտաքին քաղաքանութեան ասպարիզից, սակայն, երևի անհետևանք չի անցնելու։ Պէտք է նկատած, որ այն երեք տէրութիւններից, որոնք կազմում են եռապետական դաշնակցութիւնը, Իտալիան ամենից շուտով կարող է հեռանալ, շնորհիւ այն ահագին կապերի, որ ունի այդ երկիրը Ֆրանսիայի հետ։ Իսկ այն կուսարար դիրքը որ ստեղծել էր Կրիսպին Իտալիայի համար՝ Ֆրանսիայի նկատմամբ, դարձրել էր Կրիսպիի մնալը իւր պաշտօնում նոյն իսկ վտանգաւոր։ Իտալիայի արտաքին առևտուրը մեծ մասամբ Ֆրանսիայի հետ է, այն Ֆրանսիայի՝ որը աւելի հեշտութեամբ կարող է տանել Իտալիայի կողմից հասցրած վնասը, քան Իտալիան՝ Ֆրանսիայի կողմից հասցրած վնասը։ Կրիսպիի արտաքին քաղաքականութեան հետևանքն էր, որ անցեալ 1890 թւականին սկսեց այդ երկու հարևան տէրութիւնների մէջ մաքսային կռիւը, որից ամենաշատ վնասողը եղաւ ի հարկէ Իտալիան։ Եւ հէնց այդ մաքսային կռուի պատճառովն է, որ Իտալիայի առևտուրը և թէ առհասարակ ֆինանսները մեծապէս վնասուեցին և մեծ դեֆիցիտներ յառաջացրին, մի հանգամանք, որ մեծապէս նպաստեց Կրիսպիի յանկարծակի անկման։ Կրիսպիի հեռանալը ցոյց է տալիս որ Իտալիան, շարունակելով անդամ մնալ եռապետական դաշնակցութեան մէջ, կ'աշխատի Ֆրանսիայի հետ իւր յարաբերութիւնները լաւացնել։ Բայց և այնպէս չի կարելի չը շեշտել, որ

չը նայած իւր ֆրանսիական զօրեղ հարևանին՝ Իտալիան մնում է եռապետական դաշնակցութեան մէջ՝ Գերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի հետ։ Այդ իրողութիւնից պէտք է անշուշտ եզրակացնել, որ, անցեալ տարիների նման, նաև ներկայ 1891 թուականին եռապետական դաշնակցութիւնը մնալու է գերիշխող ոյժը Եւրոպայի արտաքին քաղաքականութեան սիստեմի մէջ։

Z.